ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 1112
18 Դեկտեմբեր 1964

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենապատիւ
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանին,
Սրբազան Պատրիարքին Հայոց Երուսաղէմի,

Ս. Երուսաղէմ.

Մեր Տիրոջ և Փրկչի Սուրբ Ծննդեան աւետիսով վերստին կը բացուին լուսէ դռները երկնքին, բաշխելու համար մեր յուսացեալ հոգիներուն հրաշի պէս անուշ երգը հրեշտակներուն՝

«Յերկին խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Արարիչը մեր և Պարգեւատուն բարեաց, տիեզերքի ներդաշնակութեան օրէնքն է որ կ'առաջէ աշխարհ, մարդկութեան համայն, իբրեւ գերագոյն բարոյական պատգամ, ցոյց տալով մարդոց և ազգերուն բոլոր ճամբան փրկութեան, ճամբան երջանկութեան;

Սիրոյ և խաղաղութեան պատգամը Աստուծոյ, կը հնչէ այսօր մանաւանդ տիրապէս հզօր ու հրաշքի պէս պայծառ, որպէսզի այլեւս ոչ մէկ կայէն չի կարողանայ սպանել իր եղբայրը Արէլ:

Փառք ի բարձունս Աստուծոյ:

Փառք խաղաղութեան իշխանին:

Եւ «երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Ս. Ծննդեան աւետիսով կը շնորհաւորենք և կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն կը յղենք Մեր Հայրապետական օրհնութիւնը Ձեր գինուորեալ միաբանութեան և համայն Մեր հաւատացեալ զաւակներուն, բարի մաղթանքներով որ Նոր Տարին ըլլայ խաղաղութեան տարի, արդարութեան տարի և եղբայրութեան տարի եկեղեցեաց և ժողովրդոց համար:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:

ՎԱԶԳԷՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@